ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ն-Դ-1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

2111

ք. Երևան «31» «01» 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վ. Գասպարյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ-ն, ի դեմս նախագահի Ն. Ավագյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 2-ի N 2225-Ա/2 հրամանով հաստատված «Մարզաբնակ երիտասարդների կարողությունների զարգացում՝ ուղղված մեդիագրագիտությանը, թվային գրագիտությանը և կիբեռգրագիտությանը» միջոցառման շրջանակներում դրամաշնորհի հատկացման մրցույթի հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 30-ին կայացած նիստի № 03/22 արձանագրությունը՝ որոշման «1115. Երիտասարդության ծրագիր» ծրագրի «11001. Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ» միջոցառման տող՝ («Մարզաբնակ երիտասարդների կարողությունների զարգացում՝ ուղղված մեդիագրագիտությանը, թվային գրագիտությանը և կիբեռգրագիտությանը») շրջանակներում «Թվային միջավայրում պաշտպանված և մեդիագրագետ ուսանող» մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության կարողությունների զարգացման ծրագիր Լոռու մարզկենտրոնի բուհերում սովորող երիտասարդների համար» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳԻՆԸ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1-ին կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված գումարից 2905.8 հազար (երկու միլիոն ինը հարյուր հինգ հազար ութ հարյուր) դրամ՝ համաձայն Հավելված N 2-ի, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի Հավելված N 1-ում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.4-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.5-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կատարողի կողմից սույն պայմանագրով նախատեսված ծրագրի ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում համապատասխան չափով նվազեցնել ֆինանսավորումը,

2.1.6. սույն պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ ծրագրի արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված ծրագրի արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. իրականացված ծրագրի արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում

միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված ծրագրի մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել սույն պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված ծրագիրը համապատասխանում է սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.2. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան հաշվառում,

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. պետական մարմնի կողմից ծրագրի իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.7. հրապարակել պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող

կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.8. սույն պայմանագրից բխող ծրագիրը չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 1.1-ին կետում նախատեսված գումարի 5.0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.9. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.10. սույն պայմանագրի 7.1 կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 3-ում սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար, իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն ծրագրի իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.4.10. սույն պայմանագրով սահմանված ծրագրի իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե:

3. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

3.1. Պետական մարմիը ծրագրի իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

4.2. Մինչև սույն պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.minfin.am հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (Հավելված N 4) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.3. Եթե իրականացված ծրագիրը համապատասխանում է սույն պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1-ին կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.4. Եթե իրականացված ծրագիրը կամ դրա մի մասը չի համապատասխանում սույն պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և սույն պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.5. Եթե սույն պայմանագրի 4.2-րդ կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում սույն պայմանագրի 4.1-ին կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.2-րդ կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո, իսկ 20 %-ը՝ սույն պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

5.2. Համաձայն «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2023 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

5.3. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարի չափը կարող է փոփոխվել սույն պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժերը վերաբերում են պետական մարմնին ներկայացվող ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բովանդակային հաշվետվություններից յուրաքանչյուրին:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել ծրագրի իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ սույն պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.5. Պետական մարմնի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում պետական մարմնի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

7.1. Սույն պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը մինչև 2023 թ. հունիսի 30-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը:

7.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7.3. Սույն պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը << Ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանի լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3 Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www.escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելու

հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.4. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն՝ իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.5. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.6. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք	ՀՀ Լոռու մարզ, ք. Ստեփանավան, Եկեղեցի 24
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Բանկ ՝ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 900011032470, ՀՎՀՀ 02698732	Հ/Հ 2471401976060000,
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	ՀՎՀՀ 06950266
Վ. Գասպարյան	ՀԿ նախագահ՝
/ստորագրություն/	**Ն. Ավագյան**
Կ.Տ.	/ստորագրություն/
	Կ.Տ.

Հավելված N 2
2023 թ. հունվարի 31 -ին
կնքված N 01-1/1 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Դրամաշնորհառու՝ «ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ
Ծրագրի անուն՝ «Թվային միջավայրում պաշտպանված և մեդիագրագետ ուսանող»
մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության կարողությունների զարգացման ծրագիր Լոռու մարզկենտրոնի բուհերում սովորող երիտասարդների համար»
Ծրագրի տևողություն՝ 5 ամիս, 01.02.2023թ.-30.06.2023թ.

Հ/Հ	Բյուջեի տողի նկարագրական	Միավոր	Միավորի քանակ	Միավորի արժեք (ՀՀ դրամ)	Պահանջվող գումար (ՀՀ դրամ)
Ա	**Աշխատավարձ (այդ թվում հարկերը)**				
1.1	Ծրագրի ղեկավար	Ամիս	2	130.000	260.000
1.2	Ծրագրի համակարգող	Ամիս	2	70.000	140.000
1.3	Մեդիա փորձագետ	Ամիս	1	150.000	150.000
1.4	Հաշվապահ	Ամիս	1	120.000	120.000
	Ընդամենը Ա				**670.000**
Բ	**Ծրագրային ծախսեր**				
2.1	Դասընթացների ճաշի ընդմիջում /100 մասնակից *(5 բուհերից ընտրված 20-ական մասնակից)* x 3000 դրամ/	Ծառայություն	1	300.000	300.000
2.2	Դասընթացների սուրճի ընդմիջում /100 մասնակից *(5 բուհերից ընտրված 20-ական մասնակից)* x 1500 դրամ x 2 անգամ/	Ծառայություն	1	300.000	300.000
2.3	Տրանսպորտային միջոցի վարձակալություն՝ Ստեփանավան-Վանաձոր-Ստեփանավան ուղղությամբ *(Ծրագրի կազմակերպիչների տեղափոխություն՝ Ստեփանավան-Վանաձորի ընտրված 5 բուհեր-Ստեփանավան. (1 օր-նախապատրաստական այց 5 բուհեր, 5 օր –դասընթաց, 2 օր-տեսահոլովակի նկարահանում, 1 օր- ինտելեկտուալ-խաղ մրցույթ, 1օր- ցուցահանդես և ամփոփում)*	Օր	10	10.000	100.000
2.4	Qr կոդով տեղեկատվական- սոցիալական տեսահոլովակի պատրաստում	Հատ	1	350.000	350.000
2.5	Տեսահոլովակի QR կոդով և ծրագրի լոգոտիպով «մեդիագրագետ, խոսող» շապիկների տպագրում	Հատ	105	4.300	451.500
2.6	Ծրագրի ընթացքի տեսանկարահանում և ամփոփիչ տեսաֆիլմի պատրաստում	Հատ	1	250.000	250.000
Ընդամենը Բ					1.751.500
Ընդամենը					**2.421.500**
ԱԱՀ					**484.300**
ԸՆԴԱՄԵՆԸ					**2.905.800**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
Վահրամ Գասպարյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ
ՀՀ Լոռու մարզ, ք. Ստեփանավան, Եկեղեցի 24
բանկ՝ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2471401976060000, ՀՎՀՀ 06950266
ՀԿ նախագահ՝
Նագիկ Ավագյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 3
«31» «01» 2023 թ.
N 09/1 2023 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____

Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2023 թ.

Կատարող կազմակերպության ղեկավարը

_____ /_____/

(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Կատարող կազմակերպության
գլխավոր հաշվապահ

(անուն-ազգանուն) (ստորագրություն)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ՝

ՀՀ ՀԳՄՍ նախարարության պատասխանատու՝

_____ /_____/

(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված N 4
2023 թ. __հունվարի 31__-ին
կնքված N __ՊԳ1__ պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պետական մարմին
______________________	______________________
______________________	______________________
գտնվելու վայրը ____________	գտնվելու վայրը ____________
հհ ____________________	հհ ____________________
հվհհ ___________________	հվհհ ___________________

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պետական մարմինը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ---- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
			արդյունքը		կատարման ժամկետը			
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
______________________	______________________
ստորագրություն	ստորագրություն
______________________	______________________
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ	Կ.Տ.

Հավելված N 5
2023 թ. հունվարի 31 -ին
կնքված N 4-34 պայմանագրի

«Թվային միջավայրում պաշտպանված և մեդիագրագետ ուսանող» մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության կարողությունների զարգացման ծրագիր Լոռու մարզկենտրոնի բուհերում սովորող երիտասարդների համար» դրամաշնորհային ծրագիր

Համառոտագիր

«Թվային միջավայրում պաշտպանված և մեդիագրագետ ուսանող» մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության կարողությունների զարգացման ծրագիր Լոռու մարզկենտրոնի բուհերում սովորող երիտասարդների համար» նախագիծն իրականացվելու է 2023թ.-ի փետրվարի 1-ից հունիսի 30-ը ՀՀ Լոռու մարզկենտրոն Վանաձորում՝ թիրախավորելով մարզկենտրոնի 5 բուհերի *(Վանաձորի պետական համալսարան (այսուհետ՝ ՎՊՀ), Հայաստանի պոլիտեխնիկական համալսարանի Վանաձորի մասնաճյուղ (այսուհետ՝ ՀԱՊՀ Վանաձորի մ/ճ), Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղ (այսուհետ՝ ՀԱԱՀ Վանաձորի մ/ճ), Հայաստանի եվրոպական համալսարան (ՀԵՀ Վանաձորի մ/ճ), Վանաձորի Մխիթար Գոշ համալսարան (այսուհետ՝ ՎՄԳՀ))* ուսանողությանը: «ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ-ի անցկացրած ուսումնասիրությունները վերոնշյալ բուհերում սովորող երիտասարդների շրջանում արձանագրել են մեդիագրագիտության և թվային գրագիտության ցածր մակարդակ: Ուսանողները տեղյակ չեն թվային միջավայրի էթիկայի ու անվտանգության կանոններից, չեն կարողանում տարբերակել հավաստի ու կեղծ տեղեկատվությունը, ուստի և գտնվում են կիբերհանցագործությունների ենթարկման հավանական վտանգի տակ: (**Ուսումնասիրության մանրամասները ներկայացված է ծրագրային հայտի համապատասխան՝ «Հիմնախնդրի և կարիքի հիմնավորում» բաժնում*):

Առաջարկվող **ծրագրի նպատակն է՝** զարգացնել Լոռու մարզկենտրոն Վանաձորի բուհերում սովորող ծրագրի շահառու լոռեցի երիտասարդների կարողությունները մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության ոլորտում՝ նպաստելով թվային միջավայրում նրանց անվտանգ, ակտիվ և գրագետ գործունեությանը՝ տեղեկատվության հավաստիության ստուգումից մինչև պաշտպանվածություն տարաբնույթ կիբերհանցագործություններից (*ֆիշինգ, համակարգչային ծովահենություն, կեղծ առևտրային գործարքներ, դրամաշորթություն, կիբերբուլինգ, պոռնոգրաֆիա, այդ թվում՝ մանկական և այլ վտանգավոր երևույթներ*): **Ծրագրի նպատակն է նաև** Լոռու մարզկենտրոնի բուհերի ուսանողների միջև ձևավորել համագործակցության և առողջ մրցակցության նոր՝ մեդիա միջավայր, նպաստել ուսանողների հետաքրքիր և բովանդակալից ժամանցի կազմակերպմանն ու ոչ ֆորմալ կրթությանը, ձևավորել քննադատական մտածողություն, օգնել շահառուներին թվային արագ փոփոխվող միջավայրում ինքնուրույն կողմնորոշվելու, փաստերը, տվյալները վերլուծելու, հասկանալու, իրենց և հարազատներին թվային միջավայրում առկա վտանգներից պաշտպանելու:

Ծրագրի ուղղակի (առաջնային) շահառու են Լոռու մարզի տարբեր համայնքներից մարզկենտրոնի բուհերում սովորող 16-30 տարեկան 100 երիտասարդներ, որոնց համար ծրագրի առաջին փուլում կրթության ֆորմալ և ոչ ֆորմալ մեթոդների, ինտերակտիվ մեդիա խաղերի համադրմամբ կանցկացվի **մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության ուղղությամբ կարողությունների զարգացման դասընթաց** (յուրաքանչյուր բուհում 1 օր, 8 ժամ տրողությամբ), որի ընթացքում նրանք հաղորդակից կդառնան համացանցից ճիշտ օգտվելու կանոններին, կսովորեն քննադատաբար վերլուծել մեդիա հաղորդագրությունները, ստուգել փաստերն ու չտարածել կեղծ լուրեր, պաշտպանել անձնական տվյալները, չդառնալ տարատեսակ կիբերհանցագործությունների ու թվային միջավայրին բնորոշ խարդավանքների զոհ:

Դասընթացների ավարտից հետո ստացած գիտելիքները թվային միջավայրում կիրառելու և զարգացնելու նպատակով նրանք կմիանան «ԿԱՄՔ» ՀԿ-ի կողմից մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության վերաբերյալ իրականացված նախորդ ծրագրի շրջանակում ստեղծված **«Մեդիագրագետ լոռեցիների բանակ» ֆեյսբուքյան խմբին**, որտեղ լոռեցի մեդիագրագետ երիտասարդները կամավոր հիմունքներով ստուգում և տեղադրում են փաստերի վրա հիմնված տեղեկատվություն, հավաստի լուրեր (հիմանականում մարզային, տեղական բնույթի), մասնակցում տարբեր մեդիա արշավների, օգնում միմյանց լինել ավելի գրագետ և պաշտպանված մեդիա միջավայրում՝ կիսվելով թվային աշխարհում իրենց ունեցած պատմություններով ու փորձով...

Ծրագրի երկրորդ փուլում թիրախ բուհերում կանցկացվի **«Մեդիան և մենք. անվտանգ թվային միջավայր» խորագրով ստեղծագործական շարադրությունների, գեղարվեստական նկարների մրցույթ՝** նպաստելով թեմայի վերաբերյալ լոռեցի ուսանողների շրջանում քննադատական մտածողության և ստեղծագործական երևակայության զարգացմանը:

Ծրագրի երրորդ փուլում ուսանող շահառուների ստացած գիտելիքներն ամրապնդելու, բուհերի միջև առողջ մրցակցություն ձևավորելու, ինչպես նաև ուսանողների ժամանցը հետաքրքիր և բովանդակալից դարձնելու նպատակով կանցկացվի **«Մեդիամարտ» ինտելեկտուալ խաղ-մրցույթ** (բրեյնռինգ), որին կմասնակցեն ծրագրի շահառու ուսանողներից կազմված թիմեր: Ակնկալում ենք յուրաքանչյուր բուհից առնվազն 1 թիմի մասնակցություն՝ 5 անդամով:

Ծրագրի ավարտին կկազմակերպվի մրցույթում ներկայացված **նկարների ցուցահանդես և ծրագրի արդյունքների ամփոփիչ միջոցառում**, որի ընթացքում կպարգևատրվեն նկարների և շարադրությունների մրցույթներում լավագույնը ճանաչված առաջին երեք տեղերն զբաղեցրած աշխատանքների հեղինակները և «Մեդիամարտ» ինտելեկտուալ խաղ-մրցույթում հաղթած թիմերը՝ ՀԿ-ի կողմից արժանանալով խրախուսական մրցանակների և պատվոգրերի:

Ծրագրի շրջանակում բուհերից ընտրված ծրագրի անմիջական շահառու ուսանողների մասնակցությամբ կպատրաստվի **«Մենք և մեդիան. անվտանգ թվային միջավայր» կամ նմանատիպ մեկ այլ խորագրով խորհրդատվական-ուսուցողական տեսահոլովակ**, որտեղ շահառու երիտասարդները կկիսվեն դասընթացի արդյունքում ստացած իրենց գիտելիքներով և համացանցից անվտանգ օգտվելու վերաբերյալ ուղերձներ կհղեն իրենց բուհերի ուսանողներին, դասախոսներին, ընտանիքի անդամներին, համայնքների բնակիչներին՝

...ացիայի կասկածելի աղբյուրները և այլն: Տեսանյութը ոչ միայն կտարածվի համացանցում, այլև կթվայնացվի QR կոդի ներքո, որը ...ղվի ծրագրի շրջանակում տարածվող նյութերի վրա՝ լուսանկարներ, տեղեկատվական նյութեր, ինչպես նաև **կպատրաստվեն ծրագրի ...բրերանշանով և տեղեկատվական-ուսուցողական տեսահոլովակի QR կոդով «մեդիագրագետ, խոսող» շապիկներ:** Ծրագրի ...մփոփիչ միջոցառման ընթացքում QR կոդ պարունակող 100 շապիկները կբաժանվեն միջոցառմանը ներկա ծրագրի շահառուներին, մրցույթի մասնակիցներին: *Ծրագրի ավարտից հետո* **«մեդիագրագետ, խոսող» շապիկը կշարունակի պատմել ծրագրի մասին՝ ծրագրի կարևոր մեսիջները տարածելով հանրության շրջանում, այսպես ասած՝ դառնալով մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության վերաբերյալ ինքնատիպ «գովազդային միջոց»:** *Ուսանողներին կառաջարկվի «մեդիագրագետ և խոսող» շապիկը կրելիս՝ առնվազն 5-6 անձի (2-3 ընկեր, ընտանիք 3-4 անդամ) առաջարկել սկանավորել շապիկի վրայի QR կոդը և հետևել «շապիկի պատմած» կարևոր խորհուրդներին՝ դրանք փոխանցելով իրենց շրջապատի մարդկանց՝ ընկերներ, ընտանիքի անդամներ, հարևան-բարեկամներ: Արդյունքում ծրագրի անուղղակի (երկրորդային)շահառուների թիվը կհասնի 500-600-ի:* Նկատի ունենալով, որ մարզկենտրոնի բուհերում սովորում են Լոռու մարզի տարբեր համայնքներից եկած երիտասարդներ, ապա 100 անմիջական շահառուների միջոցով, ծրագրի արդյունքները կտարածվեն Լոռու մարզի տարբեր համայնքներում *նպաստելով ծրագրի արդյունքների շարունակական փոխանցմանն ու տարածմանը, Լոռու մազում հանրության շրջանում մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:*

Այսպիսով, առաջարկվող նախագիծը հնարավորություն կտա համախմբել Լոռու մարզկենտրոն Վանաձորի բուհերի մեդիագրագետ ուսանողների ներուժը, ովքեր կհամալրեն «Մեդիագրագետ լոռեցիների բանակ»-ը, և ունենալով մեդիագրագիտության, կիբերգրագիտության և թվային գրագիտության վերաբերյալ կարևոր, ինչու չէ՝ կենսական նշանակություն ունեցող հիմնարար գիտելիքներ ու հմտություններ, նրանք կկարողան թվային միջավայրում լինել ավելի գրագետ, հետևաբար՝ ավելի ուժեղ և պաշտպանված՝ պատրաստ դիմակայելու տեղեկատվական պատերազամներին, կիբերհանցագործություններին, անհրաժեշտության դեպքում համախմբվելու, պայքարելու մեդիամարտերում, օգնելու իրար տարբերել օնլայն խաղերի, սոցիալական ցանցերի, առցանց առևտրի հնարավոր մանիպուլյացիաները, հավաստի ու կեղծ տեղեկությունները, պաշտպանելու միմյանց ու հանրությանը թվային միջավայրում օրեցօր ավելացող խարդախություններից, կիբերհանցագործություններից ու ապատեղեկատվական քարոզներից: Ծրագրի տեսանելիությունն ապահովելու նպատակով նախագծի ամբողջ ընթացքը կտեսանկարահանվի և կպատրաստվի ծրագրի մասին ամփոփիչ տեսաֆիլմ:

Ծրագրի նկարագրություն

Հիմնախնդրի և կարիքի հիմնավորում: Նկարագրեք ներկա վիճակը և հիմնավորեք՝ ինչու է անհրաժեշտ ծրագիրը:

21-րդ դարում մարդն ամենուր շրջապատված է մեդիայով՝ հաղորդագրություններ, հայտարարություններ, տեսանյութեր, ազդագրեր, խաղեր, պաստառներ, էկրաններ... Մեդիան սոսկ տեղեկությունների շրջանառման միջավայր չէ. այն ձևավորում է հասարակական կարծիք, ազդում է մարդկանց, հատկապես՝ երեխաների, պատանիների ու երիտասարդների վարքագծի, որոշումների, աշխարհայացքի, նախասիրությունների ու կենսակերպի վրա, ուստի մեդիա սպառողը պետք է զինված լինի համապատասխան գիտելիքով՝ մեդիայի ահռելի տեղեկատվական հորձանուտում ճիշտ կողմնորոշվելու համար:

Հատկապես երիտասարդներն այսօր իրենց ժամանակի մեծ մասն անց են կացնում համացանցում՝ տարաբնույթ շփումներ սոցիալական ցանցերում, ամենատարբեր տեղեկատվական աղբյուրների կողմից արտադրված ոչ հավաստի տեղեկատվության սպառում ու տարածում, ակամայից վիրուսների ու սպամների տարածում, օնլայն խաղեր, որոնցից շատերն ազդում են նրանց հոգեվիճակի վրա, անգամ դրդում ինքնասպանությունների, առցանց էլեկտրոնային առևտուր, որը շատ հաճախ ավարտվում է մարդկանց բանկային տվյալները կորզելով և դրամաշորթությամբ: Արդյունքում շատ երիտասարդներ տրվում են թվային միջավայրում առկա ամենատարբեր մեդիա մանիպուլյացիաներին (*մեդիա մանիպուլյացիա- զանազան մեքենայությունների միջոցով համոզելու, ճշմարտությունը խեղաթյուրելու կամ թաքցնելու, լսարանին շեղելու և ցանկալի տպավորությունը ստեղծելու համար կիրառվող մեդիա հնարքներ)* և դառնում տարբեր կիբերհանցագործությունների զոհ՝ ֆիշինգ, պոռնոգրաֆիա, այդ թվում՝ մանկական պոռնոգրաֆիա, վիշինգ, անձնական տվյալների գողություն, անօրինական կամ արգելված տեղեկատվության տարածում, համակարգչային ծովահենություն, կիբեր բուլինգ և այլն.... Ըստ միջազգային ուսումնասիրությունների՝ աշխարհում տարաբնույթ կիբերհանցագործություններից ամեն վայրկյան տուժում է 14 չափահաս: Ուստի մեր օրերում հարկավոր է լինել գրագետ և պաշտպանված թվային միջավայրում, որտեղ անցնում է մեր, հատկապես՝ երիտասարդների ժամանակի մեծ մասը: Ամենապարզ ուղին սովորելն է՝ ինչպես պաշտպանվել առցանց տիրույթում և ինչպես չլինել կիբերհանցագործության զոհ: Այսօր յուրաքանչյուր մարդ պետք է ունենա որոշակի գիտելիքներ՝ թվային աշխարհի տեղեկատվական դաշտում ճիշտ կողմնորոշվելու համար:

Գրագետ մեդիա սպառող լինելն առավել կարևոր է հատկապես հակամարտությունների մեջ գտնվող երկրներում, մեր դեպքում՝ Հայաստանի Հանրապետությունում, որտեղ մեդիան, որպես հզոր զենք, հակառակորդի կողմից կիրառվում է ապատեղեկատվություն տարածելու և զանազան կիբերհանցագործությունների նպատակով. ադրբեջանական հաքերներն ու կիբերհանցագործները ջանք ու եռնադ չեն խնայում հայկական կայքերը, հայ օգտատերերի սոցիալական ցանցերի էջերը ջարդելու և տվյալները գողանալու համար: Իսկ մյուս կողմից, թշնամական կայքերի կողմից ապատեղեկատվության տարածումն առաջացնում է տագնապի և խուճապի մթնոլորտ՝ այսպես ասած «ջուր լցնելով թշնամու ջրաղացին»: Ուստի թվային մեդիա միջավայրում գրագետ ու պաշտպանված լինելը, այսպես ասած՝ դարի հրամայականն ու ժամանակի պահանջն է:

«ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ-ն, կարևորելով երիտասարդների, մասնավորապես՝ լոռեցի երիտասարդների իրազեկ և պաշտպանված լինելը թվային միջավայրում, 2022թ.-ի հուլիս-նոյեմբեր ամիսներին ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ Լոռու մարզի Ստեփանավան, Գյուլագարակ և Լոռի Բերդ խոշորացված համայնքներում իրականացրել է «Եղի՛ր գրագետ և պաշտպանված թվային միջավայրում» նախագիծը, որին մասնակցել են շահառու համայնքներից 30 երիտասարդներ, որոնք մասնակցել են մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգարգիտության կարողությունների զարգացման դասընթացների: Շահառու երիտասարդներից ընտրվել են 6 համայնքային առաջնորդներ, որոնք էլ իրենց համայնքներում, հիմնականում 13-18 տարեկանների շրջանում անց են կացրել իրազեկման արշավներ, տեղեկատվական հանդիպումներ, որոնց ծրագրով նախատեսված 300 շահառուի փոխարեն մասնակցել է շուրջ 500 (487) դպրոցահասակ շահառուներ: Հենց այդ ծրագրի իրականացման և ծրագրի ազդեցության ընթացիկ գնահատման ու մոնիթորինգի ընթացքում «ԿԱՄՔ» ՀԿ-ի աշխատակազմը հասկացավ, որ իրականացվող ծրագիրը մեծ պահանջարկ ունի, և Լոռու մարզում մեծ թվով երիտասարդներ, հատկապես բուհերում սովորող, կարիք ունեն ձեռք բերելու մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության վերաբերյալ գիտելիքներ: Ծրագրով տեղեկատվական հանդիպումները նախատեսված էին հիմնականում դպրոցահասակ շահառուների համար, սակայն շատ հաճախ դպրոցի ուսուցչական անձնակազմը, համայնքներում ապրող ավելի մեծ տարիքի երիտասարդները, որոնցից մի մասը սովորում էին տարբեր բուհերում, ցանկություն էին հայտնում մասնակցելու տեղեկատվական դասընթացներին և մեդիագրագիտության վերաբերյալ ծրագրերի: ՀԿ-ն ստացել է նաև մարզկենտրոն Վանաձորում

ներառելու համար: Պարզելու համար Լոռու մարզկենտրոնի բուհերում սովորող երիտասարդները որքանո՞վ են մեդիագրագետ և պաշտպանված համացանցում, ՀԿ-ն 2022 թվականի աշնանը ուսումնասիրություն է անցկացրել մարզկենտրոն Վանաձորի 5 բուհերի ուսանողության շրջանում: Հարցումներին մասնակցել են Վանաձորի պետական համալսարանի, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղի, Հայաստանի եվրոպական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի և Վանաձորի Մխիթար Գոշ համալսարանի շուրջ 200 ուսանողներ: Հարցվողների 96%-ը նշել է, որ ժամանակի մեծ մասն անց է կացնում համացանցում՝ ֆեյսբուք, ինստագրամ, տիկտոկ, յութուբ, տելեգրամ հարթակներում, հարցվողների 87%-ը տեղի ունեցող դեպքերի վերաբերյալ ինֆորմացիան ստանում է համացանցից, սակայն նրանցից 78%-ը երբեք չի ստուգում ինֆորմացիան, 14%-ը հիմնականում ստուգում է: Հարցվողների 28%-ը օգտվում է համացանցային տարբեր խաղերից, իսկ էլեկտրոնային առևտուր իրականացնում է հարցվողների 43%-ը: Հարցվող երիտասարդների մեծ մասը դժգոհել է, որ սոցիալական ցանցերում և համացանցում հաճախ տարածվում է չստուգված ինֆորմացիա և շատ հաճախ իրենք չեն կարողանում տարբերակել հավաստի տեղեկատվությունը կեղծից և ակամայից տարածում են ապատեղեկատվություն կամ վիրուսներ ու սպամներ պարունակող հաղորդագրություններ, օրինակ՝ նմանատիպ բովանդակությամբ. *««Հառա» բրենդային խանութների ցանցը կամ «ԿոկաԿոլան» իր հոբելյանի աթոիվ հայտարարում է մրցույթ, ուղարկի՛ր հաղորդագրությունը 25 հոգու և ստացի՛ր 25.000 դրամ արժողությամբ նվեր քարտ...»*: Հարցվողների 74%-ը նշում է, որ եղել են դեպքեր, երբ իրենք գայթակղվել են նմանատիպ հայտարարություններով և տարածել սպամ պարունակող հաղորդագրությունը թվային միջավայրում՝ պատճառ դառնալով իրենց կամ ընկերների սոցիալական էջերի արգելափակման, ածնական տվյալների գողացման և այլ անախորժությունների: Հարցվող երիտասարդների 81%-ը ցանկություն է հայտնել մասնակցել մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգարգիտության վերաբերյալ դասընթացների:

Հաշվի առնելով այս ամենը, նաև նպատակ ունենալով ապահովել ՀԿ-ի կողմից իրականացված նախորդ՝ «Եղի՛ր գրագետ և պաշտպանված թվային միջավայրում» մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության կարողությունների զարգացման ծրագիր լոռեցի երիտասարդների համար» ծրագրի շարունակականությունը և մեծացնելու «Մեդիագրագետ լոռեցիների բանակը» (ծրագրի շրջանակում ստեղծվել է նման ֆեյսբուքյան խումբ)՝ «ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ-ն հանդես է գալիս **«Թվային միջավայրում պաշտպանված և մեդիագրագետ ուսանող»** մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության կարողությունների զարգացման ծրագիր Լոռու մարզկենտրոնի բուհերում սովորող երիտասարդների համար» ծրագրային առաջարկով՝ նպատակ ունենալով բարձրացնել Լոռու մարզենտրոն Վանաձորի բուհերի ուսանողների շրջանում մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության մակարդակը՝ զարգացնելով ծրագրի անմիջական շահառու 100 երիտասարդների կարողությունները վերոնշյալ ուղղություններով և նրանց միջոցով թվային գրագիտության էթիկան տարածել Լոռու մարզի տարբեր բնակավայրերում՝ նկատի ունենալով, որ մարզկենտրոնի բուհերում սովորում են ինչպես վանաձորցի, այնպես էլ Լոռու մարզի տարբեր քաղաքային և գյուղական համայնքներից երիտասարդներ: Արդյունքում Լոռու մարզկենտրոնի ուսանողների շրջանում և նրանց միջոցով մարզի տարբեր համայնքներում կբարձրանա մեդիագրագիտության և թվային միջավայրում անվտանգ ու գրագետ գործունեության մակարդակը:

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

Ծրագրի նպատակն է՝ զարգացնել Լոռու մարզկենտրոն Վանաձորի բուհերում սովորող ծրագրի շահառու լոռեցի երիտասարդների կարողությունները մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության ոլորտում՝ նպաստելով թվային միջավայրում նրանց անվտանգ, ակտիվ և գրագետ գործունեությանը՝ տեղեկատվության հավաստիության ստուգումից մինչև պաշտպանվածություն տարաբնույթ կիբերհանցագործություններից (*ֆիշինգ, համակարգչային ծովահենություն, կեղծ առևտրային գործարքներ, դրամաշորթություն, կիբեր բուլինգ, պոռնոգրաֆիա, այդ թվում՝ մանկական և այլ վտանգավոր երևույթներ*): **Ծրագրի նպատակն է նաև** Լոռու մարզկենտրոնի բուհերի ուսանողների միջև ձևավորել համագործակցության և առողջ մրցակցության նոր՝ մեդիա միջավայր, նպաստել ուսանողների հետաքրքիր և բովանդակալից ժամանցի կազմակերպմանն ու ոչ ֆորմալ կրթությանը, ձևավորել քննադատական մտածողություն, օգնել շահառուներին թվային արագ փոփոխվող միջավայրում ինքնուրույն կողմնորոշվելու, փաստերը, տվյալները վերլուծելու, հասկանալու, իրենց և հարազատներին թվային միջավայրում առկա վտանգերից պաշտպանելու:

Ծրագրի նպատակի իրագործմանն ուղղված խնդիրներն են՝

ԽՆԴԻՐ 1- Լոռու մարզկենտրոն Վանաձորի 5 բուհերում թվային գրագիտության, մեդիագրագիտության և կիբերգրագիտության ուղղությամբ գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերելու կարիք/ցանկություն ունեցող 100 երիտասարդների բացահայտում (*յուրաքանչյուր բուհից՝ 15-30 ուսանող, կախված բուհի բնույթից, ուսանողների քանակից և մոտիվացիայից*) և մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության առանցքային հարցերի վերաբերյալ նրանց կարողությունների զարգացում ինտերակտիվ դասընթացների և **«մեդիամարտ»** խաղերի միջոցով:

ԽՆԴԻՐ 2- Մարզկենտրոն Վանաձորի բուհերի մեդիագրագետ ուսանողների միջև համագործակցության ցանցի ստեղծում, ստացած գիտելիքների և կարողությունների կիրառում ու տարածում թվային և ոչ թվային միջավայրում:

ԽՆԴԻՐ 3- Թիրախ բուհերի ուսանողների շրջանում մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության վերաբերյալ ստեղծագործական-գեղարվեստական ունակությունների բացահայտում և զարգացում, քննադատական մտածողության ձևավորում, առողջ մրցակցության խթանում ստեղծագործական շարադրությունների և գեղարվեստական նկարների մրցույթի և «Մեդիամարտ» միջբուհական ինտելեկտուալ խաղ-մրցույթի անցկացման միջոցով:

ԽՆԴԻՐ 4- Ծրագրի անմիջական շահառուների (ինչպես նաև QR կոդով «մեդիագրագետ, խոսող» շապիկների) միջոցով մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության վերաբերյալ տեղեկատվության տարածում ծրագրի երկրորդային, անուղղակի շահառուների շրջանում՝ թիրախ բուհերի ուսանողներ, ապա և նրանց միջոցով Լոռու մարզի տարբեր համայնքների բնակիչներ (հաշվի առնելով, որ մարզկենտրոնի բուհերում սովորում են Լոռու մարզի տարբեր համայնքներից եկած երիտասարդներ):

Ծրագրի արդյունքները՝

Վերոնշյալ խնդիրները լուծելու դեպքում ակնկալում ենք ունենալ ծրագրային հետևյալ չափելի արդյունքները՝

...ությամբ գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերելու կարիք/ցանկություն ունեցող 100 երիտասարդների բացահայտում ...քանչյուր բուհից՝ 15-30 ուսանող, կախված բուհի բնույթից, ուսանողների քանակից և մոտիվացիայից) և մեդիագրագիտության, ...յին գրագիտության և կիբերգրագիտության առանցքային հարցերի վերաբերյալ նրանց կարողությունների զարգացում ...նտերակտիվ դասընթացների և «մեդիամարտ» խաղերի միջոցով:

Խնդիր 1-ը լուծելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ հաջորդական գործողությունները՝

Գործողություն 1.1. Ծրագրի նախապատրաստական աշխատանքներ՝ ծրագրի աշխատակազմի, ծառայություններ և ապրանքներ մատուցող կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքում, գնման գործընթացների կազմակերպում:

Գործողություն 1.2. Ծրագրի մասին տեղեկատվության և դասընթացների մասնակցության հայտադիմումի պատրաստում, տարածում Լոռու մարզկենտրոնի 5 բուհերի *(ՎՊՀ, ՀԱԱՀ Վանաձորի մ/ճ, ՀԱՊՀ Վանաձորի մ/ճ, ՀԵՀ Վանաձորի մ/ճ, ՎՄԳՀ)* ուսանողների շրջանում:

Գործողություն 1.3. Դասընթացների նախապատրատական աշխատանքներ՝ դասընթացների անցկացման սենյակների/դահլիճների հստակեցում, համապատասխանեցում (կահավորում/ձևափոխում) ոչ ֆորմալ կրթության պահանջներին համապատասխան, շահառուների գրենական պիտույքների փաթեթների ձեռքբերում, դասընթացների ճաշի և սուրճի ընդմիջումների հետ կապված հարցերի կարգավորում, դասընթացի օրակարգի և ուսումնական նյութերի մշակում, տպագրում:

Գործողություն 1.4. Ծրագրի աշխատակազմի և դասընթացավար-փորձագետների կողմից ծրագրի շահառուների ընտրություն, մասնակիցների հետ կապի ապահովում:

Գործողություն 1.5. Կարողությունների զարգացման դասընթացների անցկացում *(օֆլայն, յուրաքանչյուր բուհում մեկ օր, 8 ժամ տևողությամբ՝ հակահամաճարակային կանոնների պահպանմամբ)* և մեդիագրագիտության, թվային գրագիտության, կիբերգրագիտության վերաբերյալ գիտելիքների և հմտությունների փոխանցում շահառու երիտասարդներին՝ կրթության ֆորմալ և ոչ ֆորմալ մեթոդների, «մեդիամարտ» խաղերի, տեսական դասախոսությունների և գործնական պարապմունքների, ինտերակտիվ վարժանք-առաջադրանքների, կոնկերտ մեդիա նյութերի հետ աշխատանքի և այլ մեթոդների համադրմամբ:

Գործողություն 1.6. Դասընթացների ամփոփում, գնահատում, մասնակիցների կարողությունների և գիտելիքների գնահատում, հավաստագրերի հանձնում շահառուներին, նրանց հետ հետադարձ կապն ապահովող գործիքակազմի մշակում:

ԽՆԴԻՐ 2- Մարզկենտրոն Վանաձորի բուհերի մեդիագրագետ ուսանողների միջև համագործակցության ցանցի ստեղծում, ստացած գիտելիքների և կարողությունների կիրառում ու տարածում թվային և ոչ թվային միջավայրում:

Գործողություն 2.1. Դասընթացի ավարտին շահառուներին կառաջարկվի միանալ «ԿԱՄՔ» ՀԿ-ի կողմից մեդիագրագիտության վերաբերյալ իրականացված նախորդ ծրագրի շրջանակում ստեղծված «Մեդիագրագետ լոռեցիների բանակ» ֆեյսբուքյան փակ խմբին, որի անդամները մասնակցում են տարբեր տեղեկատվական մեդիա արշավների, ստուգում տեղական՝ մարզային և համայնքային նշանակության լուրեր, բացահայտում ապատեղեկատվություններ, ստեղծում ու տարածում մեդիագրագետ բովանդակություն, և թվային միջավայրում պաշտպանված ու գրագետ լինելու վերաբերյալ օգտակար, տեղեկատվական նյութեր:

Գործողություն 2.2. Շահառուները սկզբանական շրջանում ծրագրի մեդիա փորձագետների աջակցությամբ, ապա և ինքնուրույն կկատարեն գործնական առաջադրանքներ և ֆեյսբուքյան էջում կտեղադրեն իրենց կողմից ստուգված, հավաստի տեղեկատվություն, մասնավորապես՝ տեղական (համայնքային, մարզային) նշանակության ստուգված լուրեր, ինչպես նաև թվային միջավայրում պաշտպանված ու գրագետ լինելու վերաբերյալ տեղեկատվական նյութեր՝ հոդվածներ, տեսանյութեր և, դրանք տարածելով իրենց թվային միջավայրում, կօգնեն իրենց բնակավայրերի հանրությանը ճիշտ կողմնորոշվելու թվային միջավայրում, սոցիալական ցանցերում ու առցանց առևտրի ու խաղերի հորձանուտում, պաշտպանելու իրենց անձնական տվյալները, չտրվելու կիբերհանցագործություններին, չտարածելու կեղծ տեղեկատվություն, խուճապ, սպամ ներառող նյութեր...

Գործողություն 2.3. Ծրագրի շահառուների մասնակցությամբ կպատրաստվի «Մեդիան և մենք. անվտանգ թվային միջավայր» կամ նմանատիպ այլ խորագրով ուսուցողական-սոցիալական տեսահոլովակ, որի սցենարը մեդիա փորձագետների հետ կմշակեն բուհերից ընտրված ծրագրի անմիջական շահառուները՝ ներկայացնելով մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության վերաբերյալ կարճ ուղերձներ՝ ուղղված իրենց ընկերներին, բարեկամներին, համայնքի բնակիչներին:

Գործողություն 2.4. Տեսահոլովակը կտարածվի համացանցում և թիրախ համայնքների բնակիչների շրջանում, կթվայնացվի QR կոդի ներքո: Տեսահոլովակի QR կոդը ծրագրի լոգոյի հետ միասին կգետեղվի «մեդիագրագետ, խոսող» շապիկների վրա: Սկանավորելով շապիկի վրայի QR կոդը՝ հնարավոր կլինի տեսնել ուսանողների ներգրավմամբ ստեղծված ուսուցողական տեսահոլովակը թվային միջավայրում անվտանգ և իրազեկ լինելու վերաբերյալ:

Գործողություն 2.5 «Մեդիագրագետ, խոսող» տեղեկատվական շապիկները ծրագրի ավարտին կտրվեն ծրագրի անմիջական շահառու 100 երիտասարդներին, և շապիկների միջոցով թվային միջավայրում անվտանգ լինելու վերաբերյալ լոռեցի ուսանողների խորհուրդները կտարածվեն ոչ թվային միջավայրում՝ ծրագրի երկրորդային, ոչ անմիջական շահառուների (թիրախ բուհերի այլ ուսանողներ, դասախոսներ, անմիջական շահառուների ընտանիքների անդամներ, ընկերներ, հարազատներ, Լոռու մարզի տարբեր համայնքերի բնակիչներ) շրջանում՝ կոչ անելով մեդիագրագետ շապիկի ու նրա պատմածի մասին պատմել հնարավորինս շատ մարդկանց:

ԽՆԴԻՐ 3- Թիրախ բուհերի ուսանողների շրջանում մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության վերաբերյալ ստեղծագործական-գեղարվեստական ունակությունների բացահայտում և զարգացում, քննադատական մտածողության ձևավորում, առողջ մրցակցության խթանում ստեղծագործական շարադրությունների և գեղարվեստական նկարների մրցույթի և «Մեդիամարտ» միջբուհական ինտերակտիվ խաղ-մրցույթի անցկացման միջոցով:

Գործողություն 3.1. Բուհերում անցնակցված դասընթացների վերջում կհայտարարվի ծրագրի շրջանակում անցկացվող «Մեդիան և մենք. անվտանգ թվային միջավայր» խորագրով ստեղծագործական շարադրությունների և գեղարվեստական նկարների մրցույթների և *«Մեդիամարտ»* միջբուհական բրեյնռինգի, դրանց մասնակցության պայմանների ու ժամկետների մասին: Շարադրությունների և նկարների մրցույթների մասնակցության վերբերյալ տեղեկատվությունը կտարածվի նաև առցանց եղանակով՝ հնարավորություն տալով թիրախ բուհերի 16-30 տարեկան բոլոր երիտասարդներին մասնակցել մրցույթին՝ արտացոլելով մեդիագրագիտության, կիբերգրագիտության և թվային գրագիտության վերաբերյալ իրենց ստեղծագործական, քննադատական պատկերացումներն ու մտքերը:

…նկարները կուղարկեն առցանց հայտադիմումի միջոցով: Կանցկացվի շարադրությունների և գեղանկարների առցանց մրցույթ:

Գործողություն 3.3. Ծրագրի աշխատակազմի, գործընկերների, ոլորտի մեդիա փորձագետների և այլ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ կկազմավորվի մրցութային հանձնաժողով, որը կուսումնասիրի առցանց մրցույթին ներկայացված աշխատանքները և կորոշի մրցույթի յուրաքանչյուր անվանակարգում առաջին, երկրորդ և երրորդ տեղն զբաղեցրած մասնակիցներին:

Գործողություն 3.4. «Մեդիամարտ» միջբուհական ինտելեկտուալ խաղի կազմակերպում և իրականացում, որին կմասնակցեն ծրագրի անմիջական շահառու ուսանողներից կազմավորված թիմեր (առնվազն 5 թիմ հինգական անդամով):

Գործողություն 3.5. Ծրագրի ամփոփիչ միջոցառման և մրցույթին ներկայացված գեղարվեստական նկարների ցուցահանդեսի կազմակերպում՝ մասնակցությամբ ծրագրի անմիջական և երկրորդային շահառուների, մրցույթի մասնակիցների, ծրագրի շահագրգիռ կողմերի, գործընկերների և դոնոր կազմակերպության ներկայացուցիչների: **Ամփոփիչ միջոցառման ընթացքում՝** կներկայացվեն ծրագրի արդյունքները, շահառուները կկիսվեն ծրագրից ստացած տպավորություններով, այնուհետև տեղի կունենա շարադրությունների, նկարների մրցույթների և «Մեդիամարտ» միջբուհական ինտելեկտուալ խաղի արդյունքների ամփոփում, մրցույթներում առաջին երեք տեղերն զբաղեցրած մասնակիցները և թիմերը «ԿԱՄՔ» ՀԿ-ի կողմից կարժանանան խրախուսական մրցանակների ու պատվոգրերի: Միջոցառմանը ներկա ծրագրի շահառուները կստանան **«մեդիագրագետ, խոսող» շապիկներ**, և սկանավորելով շապիկի վրայի QR կոդը՝ իրենց սմարթֆոններում կդիտեն ծրագրի շրջանակում պատրաստված սոցիալական տեսահոլովակը՝ թվային միջավայրում անվտանգ ու իրազեկ լինելու վերաբերյալ:

ԽՆԴԻՐ 4- Ծրագրի անմիջական շահառուների (ինչպես նաև QR կոդով «մեդիագրագետ, խոսող» շապիկների) միջոցով մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության վերաբերյալ տեղեկատվության տարածում ծրագրի երկրորդային, անուղղակի շահառուների շրջանում՝ թիրախ բուհերի ուսանողներ, ապա և նրանց միջոցով Լոռու մարզի տարբեր համայնքների բնակիչներ (հաշվի առնելով, որ մարզկենտրոնի բուհերում սովորում են Լոռու մարզի տարբեր համայնքներից եկած երիտասարդներ):

Գործողություն 4.1. QR կոդով «մեդիագրագետ և խոսող» շապիկների տարածում ծրագրի անմիջական շահառու երիտասարդների միջոցով: Ծրագրի ամփոփիչ միջոցառման ընթացքում QR կոդ պարունակող 100 շապիկները կբաժանվեն միջոցառմանը ներկա ծրագրի շահառուներին, մրցույթի մասնակիցներին: Ներկաներին կառաջարկվի «մեդիագրագետ և խոսող» շապիկը կրելիս՝ առնվազն 5-6 անձի առաջարկել սկանավորել շապիկի վրայի QR կոդը և լսել «շապիկի պատմած» կարևոր խորհուրդները՝ դրանք փոխանցելով իրենց շրջապատի մարդկանց՝ ընկերներ, ընտանիքի անդամներ, հարևան-բարեկամներ՝ նպաստելով ծրագրի արդյունքների շարունակական փոխանցմանն ու տարածմանը, հանրության շրջանում մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:

Գործողություն 4.2. – Անմիջական շահառուների միջոցով մեդիագրագիտության, կիբերգրագիտության և թվային գրագիտության վերաբերյալ կարևոր տեղեկատվության, օգտակար նյութերի, այդ թվում՝ ծրագրի շրջանակում պատրաստված նյութերի, տեսահոլովակի, ստուգված տեղեկատվության և մեդիաբովանդակությունների տարածում թվային միջավայրում՝ անմիջական շահառուների համացանցային հարթակների, սոցիալական ցանցերի միջոցով:

5. Ծրագրի տեսանելիության ապահովում, ծրագրային արդյունքների գնահատում և ամփոփում, հաշվետվությունների պատրաստում:

Գործողություն 5.1. Ծրագրի տեսանելիությունն ապահովելու նպատակով ծրագրի ամբողջ ընթացքը կլուսանկարահանվի և կտեսանկարահանվի, կպատրաստվի ծրագրային արդյունքների վերաբերյալ ամփոփիչ տեսաֆիլմ: Այն կտեղադրվի համացանցում և կտարածվի ծրագիրն իրականացնող և ֆինանսավորող կազմակերպությունների, գործընկերների, շահառուների, շահագրգիռ այլ կողմերի համացանցային տարբեր հարթակներում, սոցիալական ցանցերում, կտրամադրվի դրամաշնորհատու կազմակերպությանը:

Գործողություն 5.2. Ծրագրի արդյունքների վերաբերյալ տեղեկատվական հոդվածներ կպատրաստվեն և կտեղադրվեն ՀԿ-ի և գործընկերների համացանցային հարթակներում, այնպես էլ հոդվածները կուղարկվեն տարբեր ԶԼՄ-ների՝ erit.am, marzer.am, mamul.am, newinfo.am և այլ հարթակներում:

Գործողություն 5.3. Ծրագրի արդյունքների ամփոփում, գնահատում, նկարագրական և ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում դրամաշնորհատու կազմակերպությանը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը:

Հարկ է նշել, որ ծրագրով նախատեսված դասընթացների և հանդիպումների ընթացքում պահպանվելու են ԿՈՎԻԴ-19 և այլ հնարավոր համավարակի կանխարգելման և տարածման համար սահմանված բոլոր կանոնները՝ կատարվելու է տարածքի և ներկաների ձեռքերի պարբերաբար ախտահանում, անհարաժեշտության դեպքում ներկաները կկրեն բժշկական դիմակներ, պահպանվելու է մասնակիցների միջև սոցիալական հեռավորությունը:

Ծրագրի արդյունքները պահպանելու, շարունակելու և զարգացնելու համար ծրագրային գործողությունների ավարտից հետո ծրագրի աշխատակազմը և փորձագետները շարունակելու են կապ պահպանել ծրագրի շահառուների հետ՝ ըստ անհրաժեշտության աջակցելով նրանց գրագետ ու պաշտպանված, ակտիվ ու իրազեկ թվային մասնակցությանը հանրային կյանքին:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Դրամաշնորհառու՝ *«ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ*

Ծրագրի անուն՝ ***«Թվային միջավայրում պաշտպանված և մեդիագրագետ ուսանող»*** *մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության կարողությունների զարգացման ծրագիր Լոռու մարզկենտրոնի բուհերում սովորող երիտասարդների համար*

Ծրագրի տևողություն՝ *5 ամիս, 01.02.2023թ.-30.06.2023թ.*

Հ/Հ	Գործողություն	Պատասխանատու	Ամիս				
			1	2	3	4	5

	Ծրագրի նախապատրաստական աշխատանքներ՝ ծրագրի աշխատակազմի, մատակարարների հետ պայմանագրերի կնքում, գնման գործընթացների կազմակերպում:	Ծրագրի ղեկավար, հաշվապահ					
2	Ծրագրի մասին տեղեկատվության և դասընթացների մասնակցության հայտադիմումի պատրաստում, տարածում Լոռու մարզկենտրոնի 4 բուհերի ուսանողների շրջանում:	Ծրագրի ղեկավար, ծրագրի համակարգող					
3	Դասընթացների նախապատրատական աշխատանքներ:	Ծրագրի ղեկավար, համակարգող, , փորձագետ-ուսուցանողներ					
4	Ծրագրի շահառուների ընտրություն, մասնակիցների հետ կապի ապահովում:	Ծրագրի ղեկավար փորձագետ-ուսուցանողներ					
5	Մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության ուղղությամբ կարողությունների զարգացման դասընթացների անցկացում:	Ծրագրի ղեկավար, համակարգող, փորձագետ-ուսուցանողներ					
6	Դասընթացների ամփոփում, գնահատում, մասնակիցների կարողությունների և գիտելիքների գնահատում, հավաստագրերի հանձնում շահառուներին, նրանց հետ հետադարձ կապն ապահովող գործիքակազմի մշակում:	Ծրագրի ղեկավար, համակարգող, փորձագետ-ուսուցանողներ					
7	Անմիջական շահառուների ներառում «Մեդիագրագետ լոռեցիների բանակ» ֆեյսբուքյան փակ խմբում, նրանց կողմից մեդիագրագետ բովանդակության, ստուգված տեղեկատվության, մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության վերաբերյալ օգտակար նյութերի տարածում թվային միջավայրում:	Ծրագրի շահառուներ, համակարգող, փորձագետ-ուսուցանողներ					
8	Շահառուների մասնակցությամբ մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության վերաբերյալ սոցիալական տեսահոլովակի պատրաստում:	Ծրագրի շահառուներ, մեդիա փորձագետներ, ծրագրի ղեկավար, տեսանյութեր պատրաստող ստուդիա					
9	Տեսահոլովակի QR կոդավորում: Տեսահոլովակի տարածում համացանցում և թիրախ համայնքների բնակիչների շրջանում:	Տեսանյութեր պատրաստող ստուդիա, ծրագրի համակարգող, շահառուներ, շահագրգիռ կողմեր					
10	Տեսահոլովակի QR կոդով և ծրագրի տարբերանշանով «մեդիագրագետ» խոսող շապիկների պատրաստում:	Ծրագրի ղեկավար, համակարգող					
11	Ստեղծագործական շարադրությունների և գեղարվեստական նկարների մրցույթի, «Մեդիամարտ» միջբուհական ինտելեկտուալ խաղ-մրցույթի հայտարարում: Մրցույթների կազմակերպչական	Ծրագրի ղեկավար, համակարգող,					

12	Շարադրությունների և գեղարվեստական նկարների մրցույթի անցկացում առցանց ձևաչափով:	Ծրագրի ղեկավար, համակարգող, մեդիա փորձագետներ, շահառու բուհեր					
13	Մրցույթի գնահատող հանձնաժողովի կազմավորում, առցանց մրցույթին ներկայացված աշխատանքների գնահատում և մրցանակային տեղերն զբաղեցրած մասնակիցների որոշում:	Ծրագրի ղեկավար, համակարգող, մեդիա փորձագետներ մրցութային հանձնաժողով,					
14	«Մեդիամարտ» միջբուհական ինտելեկտուալ խաղի կազմակերպում և իրականացում:	Ծրագրի ղեկավար, համակարգող, մեդիա փորձագետներ					
15	Ծրագրի ամփոփիչ միջոցառման և գեղարվեստական նկարների ցուցահանդեսի կազմակերպում, մրցույթների և «Մեդիամարտ» խաղի արդյունքների ամփոփում, մրցույթում առաջին երեք տեղերն զբաղեցրած մասնակիցների և թիմերի պարգևատրում:	Ծրագրի ղեկավար, համակարգող, ՀԿ կամավորներ					
16	QR կոդով «մեդիագրագետ, խոսող» շապիկների բաժանում ծրագրի անմիջական շահառուներին: Նրանց միջոցով ծրագրի վերաբերյալ տեղեկատվության, ուսուցողական տեսահոլովակի և թվային միջավայրում անվտանգ լինելու վերաբերյալ խորհուրդների տարածում երկրորդային շահառուների շրջանում:	Ծրագրի համակարգող, շահառուներ, ՀԿ կամավորներ					
17	Անմիջական շահառուների միջոցով մեդիագրագիտության, կիբերգրագիտության և թվային գրագիտության վերաբերյալ կարևոր տեղեկատվության, օգտակար նյութերի ՝տարածում թվային միջավայրում՛ անմիջական շահառուների համացանցային հարթակների, սոցիալական ցանցերի միջոցով:						
18	Ծրագրի վերաբերյալ ամփոփիչ տեսաֆիլմի պատրաստում:	Ծրագրի ղեկավար, տեսանյութերի պատրաստման ստուդիա					
19	Ծրագրի լուսաբանում ԶԼՄ-ներում:	Ծրագրի ղեկավար					
20	Ծրագրի ամփոփում, գնահատում, նկարագրական և ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և հանձնում ՀՀ ԿԳՄՄՆ-ին:	Ծրագրի ղեկավար, համակարգող, հաշվապահ					

Ծրագրի շահառուները ու շահագրգիռ կողմերը

Ծրագիրն իրականացվելու է Լոռու մարզկենտրոն Վանաձորում:

Ծրագրի ուղղակի (առաջնային) շահառուներն են լինելու մարզկենտրոնի 5 բարձրագույն ուսումնական հաստատություններից (*Վանաձորի պետական համալսարան, Հայաստանի պոլիտեխնիկական համալսարանի Վանաձորի մասնաճյուղ, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղ, Հայաստանի եվրոպական համալսարան, Վանաձորի Մխիթար Գոշ համալսարան*) ընտրված 16-30 տարեկան 100 ուսանողներ, ովքեր հետաքրքրված են մեդիագրագիտությամբ, ուզում են թվային միջավայրում լինել իրազեկ ու առավել պաշտպանված՝ ձեռք բերելով մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության վերաբերյալ արդիական

...ավորապես՝ իրենց ընտանիքի անդամներին, ընկերներին, ծանոթներին, համայնքի բնակիչներին: Ակնկալում ենք յուրաքանչյուր բուհից ...ի ուսանողի մասնակցություն՝ կախված բուհի բնույթից, ուսանողների քանակից, հետաքրքրությունների շրջանակից և մոտիվացիայից:

Մասնակիցների ընտրությունը կատարվելու է առցանց մշակված հայտադիմումների հիման վրա՝ բուհերի աշխատակազմերի և ուսանողական խորհուրդների հետ համագործակցությամբ: Շահառուներին ընտրելու է ծրագրի աշխատանքային թիմը՝ հաշվի առնելով դիմորդների հետաքրքրության համապատասխանելիությունը դասընթացի թեմաների հետ, մասնակցելու շարժառիթը և դասընթացի ընթացքում ստացած գիտելիքների և կարողությունների օգտագործման, տարածման ուղիները: Մասնակիցների ընտրության հարցում պահպանվելու է սեռային հավասար բաշխումը, խտրականություն՝ ըստ մասնակիցների սեռի, կրոնի, ազգության և այլն, չի դրսևորվելու: Ծրագրի աշխատանքային թիմի կողմից խրախուսվելու է ներքոնշյալ խմբերի երիտասարդների մասնակցությունը ծրագրին՝

- Լոռու մարզի գյուղական համայնքներից մարզկենտրոնի բուհերում սովորող երիտասարդներ
- Պատերազմի պատճառով Արցախից տարհանված և Լոռու մարզում ապաստանած երիտասարդներ, ովքեր սովորում են թիրախ բուհերում,
- Մարտական գործողություններին մասնակցած թիրախ բուհերում սովորող երիտասարդներ,
- Սահմանափակ հնարավորություններով երիտասարդներ (սոցիալապես անապահով ընտանիքների երիտասարդներ, հաշմանդամություն ունեցող երիտասարդներ):

Ծրագրի անուղղակի (երկրորդային) շահառու ենք դիտարկում թիրախ բուհերի ուսանողներին, ովքեր ծրագրի մասին կստանան տեղեկատվություն ծրագրի անմիջական շահառու իրենց կուսընկերներից: Ակնկալում ենք, որ ծրագրի ուղղակի շահառուները ստացած տեղեկատվությամբ կկիսվեն առնվազն 2 ընկերոջ հետ, արդյունքում կունենանք 100x2=200 անուղղակի շահառու ուսանողներ: Բուհերի բոլոր ուսանողները կարող են նաև մասնակցել ծրագրի շրջանակում հայտարարված շարադրությունների և նկարների մրցույթներին, ականատես լինել «Մեդիամարտ» ինտելեկտուալ-խաղ մրցույթին և այդ կերպ, որպես հանդիսատես, ստանալ տեղեկատվություն մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության վերաբերյալ:

Ծրագրի անուղղակի շահառու ենք դիտարկում նաև ուղղակի շահառուների (100 ուսանող երիտասարդ) ընտանիքի անդամներին, քանի որ ուղղակի շահառուներն իրենց ձեռք բերած գիտելիքներով ու կարողություններով անշուշտ օգնելու են նաև ընտանիքի անդամներին թվային միջավայրում լինել ավելի իրազեկ, պաշտպանված, տարբերակել հավաստի և կեղծ տեղեկատվական աղբյուրները, ստուգել փաստերը, չտարածել ապատեղեկատվություն, պաշտպանել անձնական տվյալները, զերծ մնալ համացանցում տարածված մանիպուլյացիաներից, դրամաշորթությունից, կիբերհանցագործության այլ տեսակներից: Ընտանիքի անդամների քանակը միջինում դիտարկելով 4, կստացվի 4x100=400, կունենանք ևս շուրջ 400 անուղղակի շահառու: Արդյունքում ծրագրի անուղղակի շահառուների թիվը կհասնի շուրջ 600-ի, որոնցից 200-ը կլինեն շահառու բուհերում ուսանող երիտասարդներ, 400-ը Լոռու մարզի տարբեր համայնքներում ապրող, տարբեր տարիքի բնակիչներ:

Ընդհանուր առմամբ ծրագրի անուղղակի շահառու է Լոռու մարզի բնակչությունը, քանի որ մարզկենտրոն Վանաձորի բուհերում սովորում են ինչպես Վանաձորի, այնպես էլ մարզի տարբեր համայանքների երիտասարդներ: Ծրագրային գործողությունների արդյունքում ծրագրի անմիջական շահառուների միջոցով Լոռու մարզի քաղաքային և գյուղական բնակավայրերում կբարձրանա մեդիագրագիտության, կիբերգրագիտության և թվային գրագիտության մակարդակը, կբարձրանա բնակիչների ակտիվ և իրազեկ թվային մասնակցությունը հանրային կյանքին, նրանք ավելի պաշտպանված կլինեն ապատեղեկատվություններից, համացանցային զանազան խարդախություններից ու հանցագործություններից, կդառնան ավելի գրագետ մեդիա սպառող:

Ծրագրի շահագրգիռ կողմերն են՝

Լոռու մարզկենտրոնի 5 բուհերը և նրանց ուսանողական խորհուրդները, որոնք շահագրգիռ են իրենց ուսանողների մեդիագրագիտությամբ, թվային գրագիտությամբ և կիբերգրագիտությամբ, քանի որ ուսանողները հնարավորություն են ստանալու ոչ ֆորմալ կրթության միջոցով ձեռք բերել նոր գիտելիքներ ու հմտություններ, որի շնորհիվ համացանցում կլինեն ավելի պաշտպանված և թվային միջավայրը կօգտագործեն ավելի արդյունավետ ու նպատակային, այդ թվում՝ դասերը պատրաստելիս սովորելով օգտվել վստահելի և հավաստի աղբյուրներից, չհավատալով համացանցում տեղ գտած ցանկացած տեղեկատվության: Բացի այդ ծրագրի շրջանակում կազմակերպվող մրցույթների, ինտելեկտուալ խաղերի շնորհիվ բուհերում ուսանողական կյանքը կդառնա հետաքրքիր և բովանդակալից: Բուհերն աջակցելու են ծրագրի վերաբերյալ տեղեկատվության տարածման, անմիջական շահառուների բացահայտման և ներգրավման, դասընթացների արդյունավետ կազմակերպման և անցկացման, երկրորդային շահառուների ակտիվ ներգրավման, ինչպես նաև շարադրությունների և նկարների առցանց մրցույթների և «Մեդիամարտ» ինտելեկտուալ խաղ-մրցույթի կազմակերպչական հարցերում:

Ծրագրի շահագրգիռ կողմ են նաև Լոռու մարզպետարանը (մասնավորապես՝ մարզպետարանի կրթության վարչությունը, լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը), ինչպես նաև Վանաձորի համայնքապետարանը, որոնք շահագրգռված են Լոռու մարզի և մարզկենտրոնի բնակիչների, մասնավորապես՝ երիտասարդների մեդիագրագիտության, կիբերգրագիտության և թվային գրագիտության մակարդակի բարձրացմամբ, որովհետև եթե թվային միջավայրում համայնքի/մարզի բնակիչը ավելի խելացի է գործում, չի տարածում ապատեղեկատվություն, սպամներ ու վիրուսներ, ավելի պաշտպանված է կիբերհանցագործություններից անձնապես, հետևաբար տվյալ համայնքը/մարզը ինչ-որ չափով ավելի պաշտպանված է կիբերհանցագործությունների ենթարկման հավանականություններից, համացնացային տարատեսակ խարդավանքներից: Նշված կառույցներն աջակցելու են ծրագրով նախատեսված դասընթացների, ցուցահանդեսի, խաղ-մրցույթի և ամփոփիչ միջոցառման համար անվճար տարածքներ, տեխնիկական ռեսուրսներ հատկացնելու, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, բուհերի հետ արդյունավետ համագործակցելու հարցերում:

Առաջարկվող սույն ծրագրի շրջանակում «ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ-ն համագործակցելու է «Մեդիա նախաձեռնությունների կենտրոն»-ի (նախկին «Ինտերյուս»-ի) հետ (*առկա է բանավոր պայմանավորվածություն ՄՆԿ-ի մեդիագրագիտության ծրագրերի ղեկավար Լուսինե Գրիգորյանի հետ*), քանի որ կազմակերպության առաքելություններից է բարձրացնել մեդիագրագիտության մակարդակը մարզերում, հատկապես՝ երիտասարդների շրջանում ուստի ՄՆԿ-ն շահագրգիռ է ծրագրի իրականացմամբ և պատրաստ է նախագծի իրականացման ընթացքում աջակցելու դասընթացների ու տեղեկատվական հանդիպումների

…դակությունների պատրաստման ուղղությամբ, տրամադրելու է փորձագիտական խորհրդատվություն և աջակցություն՝ ըստ …րաժեշտության ծրագրում ներգրավելով ոլորտում ճանաչված իր փորձագետներից: Ծրագրային հայտին կից ներկայացված են ՄՆԿ-ի …կու առաջատար փորձագետներ Նարինե Սաֆարյանի և Գեղամ Վարդանյանի ինքնակենսագրականները, ովքեր պատրաստակամ են …րագրի շրջանակում իրականացնել փորձագիտություն և խորհրդատվություն: (*Կախված ծրագրի իրականացման ժամանակահատվածում ՄՆԿ-ի երկու փորձագետների աշխատանքային գրաֆիկից՝ ծրագրում որպես հիմնական մեդիա փորձագետ- ուսուցանող կընդգրկվի նրանցից մեկը, իսկ մյուսը խորհրդատվություն կանցկացնի առցանց՝ ըստ անհրաժեշտության):*

Լոռու մարզային ՀԿ-ներից ծրագրի իրականացման ընթացքում ակտիվորեն համագործակցելու ենք «Մեդիա ակումբ» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի հետ, որն ունի մեդիագրագիտության դասընթացներ վարելու հարուստ փորձ, ոլորտում կայացած մասնագետներ, «Մեդիա ակումբ»-ի հիմնադիր նախագահ, մեդիա փորձագետ և լրագրող-մանկավարժ Նարինե Մաթևոսյանը կամավոր հիմունքներով ընդգկված է լինելու սույն ծրագրում՝ որպես մեդիա փորձագետ-ուսուցանող:

Ռիսկերի գնահատում

Ծրագրի իրականացման ընթացքում, որպես հնարավոր ռիսկեր, դիտարկում ենք COVID-19 համավարակի հնարավոր սրացմամբ, պատերազմի, երկրաշարժի կամ այլ բնական աղետի պատճառով առաջացած ֆորսմաժորային իրավիճակը և Հայաստանի Հանրապետությունում արտակարգ կամ ռազմական դրության վերահաստատումը: Նման իրավիճակում ՀԿ-ն կառաջնորդվի ՀՀ-ում արտակարգ կամ ռազմական դրությունների համար պետության կողմից սահմանված իրավական նորմերով՝ անհրաժեշտության դեպքում երկարաձգելով ծրագրի իրականացման տվյալ փուլի ժամկետը՝ առանց աշխատակազմի լրացուցիչ վարձատրության և այլ ֆինանսական ծախսերի: Կախված ստեղծված իրավիճակից՝ ծրագրի աշխատակազմը կցուցաբերի ճկունություն և արագ արձագանքելով ստեղծված իրադրությանը, կմշակի ծրագրի իրականացման նոր մեթոդաբանություն: Օրինակ, եթե համավարակի հնարավոր սրացմամբ պայմանավորված կրկին արգելվեն մասսայական միջոցառումները, կկատարվի ծրագրային բյուջեի վերահաշվարկ և ծրագրով նախատեսված դասընթացներն ու հանդիպումներ կանցկացվեն առցանց ձևաչափով: Նմանատիպ ծախսերը և այլ ռիսկերի կանխարգելման հետ կապված հնարավոր ծախսերը կհոգա ծրագիրն իրականացող կազմակերպությունը՝ «ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն ՀԿ-ն:

Հնարավոր ռիսկ ենք դիտարկում նաև ծրագրի իրականացման ընթացքում որոշ բուհերի ղեկավարների կողմից համագործակցության ցանկության բացակայությունը (չնայած որ ներկա պահին հինգ բուհերից չորսի հետ առկա է նախնական բանավոր պայմանավորվածություն): Այնուամենայիվ տվյալ բուհի ուսանողներին այլընտրանքային ճանապարհներով (բուհի հարակից տարածքում հայտարարություններ փակցնելով, ընկերների և համացանցի միջոցով տեղեկացնելով) հնարավորություն կտրվի մասնակցել մեկ այլ բուհում կազմակերպվող տեղեկատվական սեմինարին, ծրագրով նախատեսված միջոցառումներին և միանալու մեդիագրագետ լոռեցիների բանակին թե՛ թվային, թե՛իրական միջավայրում:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական մարչություն
Հ/Հ 900011032472, ՀԿՀՀ 02698732
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
Վահրամ Գասպարյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ
ՀՀ Լոռու մարզ, ք. Ստեփանավան, Եկեղեցի 24
բանկ՝ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2471401976060000, ՀԿՀՀ 06950266
ՀԿ նախագահ՝
Նազիկ Ավագյան

/ստորագրություն/
Կ.Տ.